



Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ՀԱՄԱՐ
20 ԱՊՐԻԼԻ 2013Թ. • № 9 (282)

www.syuniacyerkir.am

...Սերն է սկիզբը

ամենայն բարիքի:

ՀՈՎԿԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ

Սերժ Սարգսյանը երկրորդ անգամ ստանձնեց ՀՀ Նախագահի պաշտոնը

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՐ
ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՀ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏՈՒՄ
ՍՏԱՆԶՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՐԻ ՊԱՇՏՈՆԸ

Նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը ապրիլի 9-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում ստանձնեց և Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ ժողովրդին տրված հետևյալ երդմամբ: «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի»:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնանքի խոսքից և աղոթքից հետո նախագահ Սերժ Սարգսյանը հանդես է եկել ելույթով:

Շարունակությունը՝ էջ 2



ՖՈՏՈՒՄ

Ուժը պետք է ծառայի օրենքին ու մարդուն

Սյունիքում նշվեց ոստիկանության մասնագիտական օրը

2001թ. ապրիլի 16-ին էր, երբ ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը: Նույն տարվա դեկտեմբերի 12-ին էլ հանրապետության կառավարության որոշմամբ ապրիլի 16-ը հայտարարվեց ոստիկանության մասնագիտական օրը:

Այս անգամ ոստիկանության օրը մարզում նշվեց երեք օր առաջ՝ ապրիլի 13-ին, պատճառը թերեւս այն էր, որ մարզային ոստիկանության ներկայացուցիչներն ապրիլի 16-ին պետք է մասնակցեին մայրաքաղաքային միջոցառումներին: Սյունիքյան տոնակատարությունը նախորդ տարիներից տարբերվում էր հանդիսավորությամբ, ոստիկանների և հյուրերի առավել ներկայացուցչական կազմով: Դա էլ իր պատճառն ունեւր. այս տարի լրանում է մեր ոստիկանության կազմավորման 95-ամյակը, եւ օրն առիթ էր անդրադառնալու ոստիկանության անցած ճանապարհին, ինչպես եւ գնահատելու լավագույններին: Իսկ ոստիկանությունը մեզանում հիմնադրվել է 1918 թվականին Հայաստանի առաջին հանրապետության օրերին: ՀՀ կառավարության բաղկացուցիչ մաս համարվող ներքին գործերի նախարարությունը, որ սկզբնական շրջանում գլխավորում էր մեր հայրենակից Արամ Մանուկյանը, խնդիր ուներ դարձնել հետո անկախությունը վերագրած երկրում հաստատել իրավակարգ, ապահովել քաղաքացիների անձի և գույքի անձեռնմխելիություն, ինչպես եւ համակարգել կապն ու հեռահաղորդակցությունը, երկաթուղին, կրթական գործը:

Տոնական օրը սկսվեց ոստիկանության Կապանի բաժնի մուտքի մոտ կանգնեցված հուշաքարի պատվանդանին ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնելով: Պսակադրությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Վահրամյան Ավագյանը, մարզի դատախազ Նորայր Հակոբյանը, մարզի քաղաքային համայնքների ղեկավարներ, ոստիկանության վետերաններ, ոստիկանության Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու բաժնիների ու հասարակայնության ներկայացուցիչներ: Ի դեպ՝ հուշաքարը խտացված այն հիշողությունն է, որին տոնական բոլոր առիթներով առնչվում են Կապանի ոստիկանները: Հուշաքարը հիմնվել է 1995թ. նոյեմբերի 5-ին՝ պահպանության բաժնի գումարտակի ստեղծման օրը՝ ի հիշատակ Սյունիքի մարզի այն ոստիկանների, ովքեր նահատակվեցին Արցախյան ազատամարտում՝ Անդրանիկ Հովհաննիսյան, Մարտուն Գրիգորյան, Վահրամ Մարտիրոսյան, Նորայր Ղուկասյան, Գրիգոր Մնացականյան, Ալբերտ Հովհաննիսյան, Սամվել Ավագյան, Սամվել Ղազարյան, Ֆելիքս Միրզոյան, Էդիկ Սարգսյան, Արմեն Մաթեոսյան, Ավետիք Հայրապետյան (հուշաքարը կառուցվել է ոստիկանության գնդապետ Օմիկ Ստեփանյանի նախաձեռնությամբ և ճարտարապետ Յուրա Գեորգյանի նախագծումով):

Տոնակատարությունը շարունակվեց Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան Շարունակությունը՝ էջ 5

Մաքրել ավգյան ախոռները. ահա երկրի ներքաղաքական կյանքի գլխավոր հրամայականը

ՀԱՅԱՅՔ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Իրենց ընդդիմադիր համարող քաղաքական ուժերն ու լրատվամիջոցները (քիչ բացառությամբ) տարբերքի մեջ են (ավելի, քան գործող իշխանությունները)՝ Ռաֆֆին ծախողվել է: Դրան նախորդել էր հետընտրական մի ամբողջ շրջան (փետրվարի 18-ից ապրիլի 9-ը), երբ այդ ուժերն առանձնահատուկ սարկազմով քննարկում էին, դատափետում նրա ամեն մի քայլ, ամեն մի արտահայտություն (ավելորդված հազարավորների կողքին կանգնելու փոխարեն): Իրականում, մինչդեռ, այդ քննարկումները, ծաղրանքի շքահանդեսը չէին բխում (չեն բխում) հետընտրական շարժման ճակատագրի հանդեպ ունեցած անկեղծ մտահոգությունից: Իրականում, որքանով տեսնում ու հասկանում ենք, ընդդիմադիր ու այսպես կոչված այլընտրանքային ուժերի ծնողները (գրեթե անթաքույց) մի իրողության հետ չէին կարողանում (չեն կարողանում) հաշտվել՝ ինչո՞ւ փետրվարի 18-ին հենց Ռաֆֆին ստացավ համրության ընդդիմադիր հատվածի համակրանքը, ինչո՞ւ Ռաֆֆին ստացավ ընտրության մասնակիցների 37%-ի քվեները: Հիմա նույն այդ քաղաքական ուժերը փորձում են օգտա-

գործել մայրաքաղաքի ավագանու առաջիկա ընտրությունը եւ հնարավորինս ռեաբիլիտացվել մարդկանց աչքում, ցույց տալ, որ Ռաֆֆին հավաքած 37%-ը պատահականության, հայտնի հանգամանքների արդյունք է (թեւեւ անտեղի ու անհնարին է պատմության այդ էջի սրբագրումը, որ կոչվում է 18 փետրվարի 2013թ.):

Իհարկե, Ռաֆֆին ինքն էլ իրեն շատ անգամ դրեց ծիծաղելի վիճակի մեջ, քանիցս ցույց տվեց, որ խոսքն իր համար այնքան էլ արժեք չունի, որ սկզբունքը կարելի է անընդհատ վերանայել: Շատ հաճախ նույնիսկ շառլատանի (ներողություն ենք խնդրում այդ բառի համար), իրականությունից կտրված մարդու, շաղակրատի տպավորություն թողեց, բայց... Հանրության ընդդիմադիր հատվածը հենց նրան կանգնեցրեց իր առաջնորդի պատվանդանին: Եվ եթե նրա որոշ քայլեր մեզ հասկանալի չէին, անտրամաբանական էին, ոչ քաղաքական էին, ոչ գաղափարական էին, ապա այդ ամենը դեռ չի նշանակում, որ ինքն իսկապես սխալ էր ու պատահականություն: Մի՞թե նրան քարկոծել կարելի է նաեւ ապրիլի 9-ի պահվածքի համար, երբ (կրիտիկական զանգվածի բացակայության պարագայում) վերահաս արյունահեղությունը կանխելու համար իր հետեւորդների մի մասի

հետ Ծիծեռնակաբերդ գնաց՝ կամա թե կամա կասեցնելով Բաղրամյան պողոտայում սաստկացող բախումը: Այնպես որ հակասական, վիճելի, անզան զավեշտալի բոլոր քայլերով հանդերձ Ռաֆֆին ընդդիմության (ոչ իշխանական դաշտի) ավելի վատ լիդեր չէր, քան բոլոր նախորդներն առանձին-առանձին վերցրած՝ 1996թ. մուշի Վազգեն Մանուկյանից սկսած:

Հետընտրական շարժումը, որքան էլ կույր ձեւանանք, որոշակի հետեւանքներ ունեցավ: Նախ՝ այդ շարժումը բարոյական լուրջ վնաս հասցրեց եւ իշխող վարչախմբին, եւ երկրի ժողովրդավարական վարկանիշին: Անկեղծ չեն նրանք, ովքեր այդ ամենը չեն տեսնում կամ չտեսնելու պատրանք են ստեղծում: Հետընտրական շարժումը, կարծում ենք, կունենա (եթե արդեն չի ունեցել) քաղաքական հետեւանք, եթե, իհարկե, մեզ համար գլխավոր պետական ու ազգային շահն է: Ավելի ակնհայտ դարձավ, որ ոչ իշխանական քաղաքական ուժերը (ընդդիմադիր, այլընտրանքային) լուրջ հիվանդ են եւ իրենց գործով այնքան էլ կապ չունեն իրական Հայաստանի հետ, որ կուսակցական շահը, կուսակցապետերի անձնական ամբիցիաները վեր են ազգային ու պետական շահից: Եվ դա է

Շարունակությունը՝ էջ 5

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



9 ապրիլի 2013թ.,
Երդմակալության
արարողությունը Կարեն
Ղեկավարի անվան
մարզահամերգային համալիրում

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «... Ժամանակն է խոսքից գործին անցնելու»

Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը երդմակալության արարողության ժամանակ

Վեհափառ Սերժ Սեծարգո նախագահի Քոչարյան, Արցախի Հանրապետության մեծարգո նախագահ, Մեծարգո նախագահ Ղուկասյան, Հայաստանի Հանրապետության սիրելի քաղաքացիներ, Սիրելի հայրենակիցներ, Հարգելի հյուրեր, բարեկամներ, Շնորհակալություն եմ հայտնում մեր քաղաքացիներին նախագահական ընտրություններին ակտիվ մասնակցելու համար: Շնորհակալ եմ նրանց, ովքեր վստահել են ինձ շարունակել աշխատանքը Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում:

Նաև շնորհակալ եմ նրանց, ովքեր իրենց ձայնը տվել են այլ թեկնածուների: Դրանով նրանք արտահայտել են իրենց դժգոհությունը երկրում առկա խնդիրների վերաբերյալ: Դրանով նրանք իշխանություններին հղել են հստակ ուղերձ՝ ավելի արդյունավետ աշխատելու պահանջ: Համոզված եղեք, որ բոլոր ուղերձները տեղ են հասել:

Սիրելի հայրենակիցներ, Այսօրվա երդման արարողությանը ես կրկին ստանձնեցի մեծ պատասխանատվություն, որի գիտակցումը անցած հինգ տարիների ընթացքում ինձ չի լքել ոչ մի վայրկյան: Վեհամոր ավետարանը, որի վրա ես երդվեցի, հազար տարվանից էլ հին է: Նման պատմական ու մշակութային հենք ունեցող ազգի

ղեկավար կարգվելը բացառիկ պատիվ է: Այս հանդիսավոր պահին ես խոստանում եմ այդ պատիվը բարձր պահել:

Որեւէ նախագահի համար Սահմանադրությամբ նախատեսված երկրորդ ժամկետն ունի եւ իր առավելությունները, եւ իր բարոյությունները: Հիմնական առավելությունը, իհարկե, կուտակված փորձն է, որ նման աշխատանքի դեպքում խիստ արժեքավոր է: Լրացուցիչ բարոյությունները կապված են ժողովրդի ավելի մեծ ակնկալիքների եւ ավելի բարձր պահանջների հետ: Ես անելու եմ ամեն ինչ՝ այդ ակնկալիքներն ու պահանջները կյանքի կոչելու համար:

Առաջիկա հինգ տարիներին մեր պետության եւ ժողովրդի առաջնահերթ խնդիրն էմ համարում տնտեսական առաջընթացը: Հայաստանի հիմնախնդիրների մի ողջ փաթեթ այս հարթությունում է: Կառնաձեռք են երեք հիմնականը՝ արտագաղթ, գործազրկություն, աղքատություն: Դրանց լուծումները նույնպես այս

հարթությունում են: Արդյունավետ եւ վերելքի ճանապարհը բռնած տնտեսությունն է: ահա հաջողության մեր բանաձեռը:

Երկրորդ առաջնահերթությունը իրավունքի գերակայության ապահովումն է: Բոլորի հավասարությունը օրենքի առջև պարտադիր պայման է մեր թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական զարգացման համար:

Երրորդ առաջնահերթությունը, որն ամենաուղղակի կերպով կապված է նախորդի, այսինքն՝ իրավունքի գերակայության հետ, ժողովրդավարության խորացումն է: Համեմատե՛ք իհնգ տարի առաջվա Հայաստանը այսօրվա Հայաստանի հետ եւ կտեսնեք տարբերությունը: Համեմատե՛ք խոսքի, մամուլի, հավաքների ազատության մակարդակները: Համեմատե՛ք հասարակական կազմակերպությունների եւ ընդհանրապես քաղաքացիական հասարակության կայացածության մակարդակները: Խոստանում եմ, որ եղածով չենք բավարարվելու, կանգ չենք առնելու: Հինգ տարի հե-



9 ապրիլի 2013թ.

տո մենք ունենալու ենք ժողովրդավարության բոլորովին նոր՝ անհամեմատ բարձր մակարդակ: Դա եւ միայնակ չեն անելու, դա անելու ենք միասին, սիրելի՛ հայրենակիցներ:

Արտաքին քաղաքականության ասպարեզում Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորումը մնում եւ մնալու է մեր առաջնահերթությունն այնքան ժամանակ, քանի դեռ չենք հասել վերջնական լուծման: Միաժամանակ մենք հետեւողականորեն աշխատելու ենք մեր անվտանգության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Այստեղ մենք չենք թերագնահատում միջազգային որեւէ գործոն, մենք շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր օժանդակում են տարածաշրջանում կայունության ապահովմանը, բայց մենք պարտավոր ենք առաջին հերթին ապավինել մեր ուժերին: Հնարավոր բացասական զարգացումների դեպքում հակառակորդին զսպելու եւ խաղաղությունը պահպանելու կարեւորությունը քննարկման առարկա չէ:

Մենք երբեք չենք հապեկել սեփական ժողովրդին պատերազմով: Առավել եւս չենք օգտագործել այդ հարցն իբրեւ պատրվակ՝ լռեցնելու համար ընդդիմադիրների ձայնը: Բայց մեր պարտքն ենք համարել անկեղծորեն եւ իրատեսորեն ասել, որ նման վտանգ գոյություն ունի:

Պատերազմ չտեսած եւ անպատասխանատու մարդիկ կարող են դրա հնարավորությունը դարձնել ցինիկ եւ ստորաբարձ շահարկումների առարկա: Ես նրանցից չեմ. ես գիտեմ եւ ընկերոջ կորստի, եւ հաղթանակի բերկրանքի գինը, դողացել եմ զինվորի կյանքի համար, նաև հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողի համար: Ուստի Հայաստանի ժողովրդից ստացած վստահության

այնպես էլ ողջ աշխարհին:

Մենք մեր հարեւանների անաշարկել ենք համամարդկային արժեքների վրա խարսխված արժանապատիվ խաղաղություն: Բայց անցած տարիների փորձը ցույց տվեց, որ նրանք պատրաստ չեն ընդունելու այդ առաջարկը: Որքան ավելի բարդ պայմաններ են նրանք, իրենց կարծիքով, ստեղծում մեզ համար, այդքան ավելի ուժեղ ենք մենք դառնում: Եվ դա ավելի տեսանելի է լինելու:

Այսօր որքան անհավասար են մեր արտահանման պայմանները, այդքան ավելի ջանք մենք պետք է ներդրենք՝ հավելյալ արժեք պարունակող ապրանքներ ստանալու համար: Ներդրենք, որպեսզի ստանանք համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանք ու ծառայություններ:

Մեր հիմնական առավելությունը մեր ժողովրդի, մեր մարդկանց նախաձեռնողականությունն ու տաղանդն է: Ժամանակակից տեխնոլոգիաների բնագավառում աշխատող մեր տղաներն ու աղջիկները մեր զինվորների պես ամուր են պահում մեր երկրի անվտանգությունը: Իսկ նրանց հետ՝ նաև յուրաքանչյուր մարդ, ով ազնիվ աշխատում եւ արդյունք է տալիս:

Մեր հիմնական խնդիրն է՝ ավելացնել այդպիսի մարդկանց համար դրսեւորվելու ուղիները: Տա՛նք մարդկանց հնարավորությունը՝ մնացած ամեն ինչ նրանք ինքնուրույն կանեն, կարարեն, կստեղծեն, կգարգացնեն:

Նաև այդ նպատակով մենք պետք է ապահովենք Հայաստան-սփյուռք գործակցության դիմամիկ զարգացումը: Ես վստահ եմ՝ մենք միասին կարող կենք շատ ավելի անել: Մենք պետք է առավելագույնս



9 ապրիլի 2013թ.



9 ապրիլի 2013թ.

քվեի ուժով հայտարարում եմ՝ մենք պատերազմ չենք ցանկանում, սակայն, միաժամանակ, պատրաստ ենք դիմագրավելու յուրաքանչյուր մարտահրավերի: Ընդգծում եմ չընթերցողների համար՝ յուրաքանչյուր մարտահրավերի:

Սիրելի հայրենակիցներ, Պարտադրանք, բռնություն, ահաբեկում, պատերազմ՝ սրանք են իրականության վերաբերյալ մեր հակառակորդի պատկերացումները: Այն իրողությունները, որ նրանք պարտադրում են սեփական ժողովրդին, նաև ցանկանում են պարտադրել մեզ:

Մենք նրանց այդ պայմանները մերժել ենք, եւ դրանք երբեք չենք ընդունելու: Մենք այլ իրականություն ենք կերտում. ինչպես արդեն ասացի՝ տնտեսական վերելք, օրենքի գերակայություն, ժողովրդավարության ամրապնդում: «Հայաստան» անունն առաջին հերթին պետք է զուգորդվի սրանց հետ: Դեռ սրանք են մեր հակապատարկները, որ ներկայացնում ենք ինչպես մեր հակառակորդներին,

ներգրավենք սփյուռքի ներուժը, առաջին հերթին՝ մարդկային կապիտալը: Մրցունակ եւ զարգացման տանող յուրաքանչյուր ներդրումային ծրագիր կստանա Հայաստանի Հանրապետության իշխանությունների աջակցությունը:

Սիրելի հայրենակիցներ, Ընտրարշավի ժամանակ մենք բոլորս խոսելու եւ մեր ծրագրերը ներկայացնելու լայն հնարավորություններ ունեցանք: Միաժամանակ, մեզնից յուրաքանչյուրը մտահոգված էր նրանով, որ իր ասելիքը հնարավորինս մանրամասն եւ ամբողջական կերպով տեղ հասնի: Ընտրություններով ոչինչ չի ավարտվում, այլ սկսվում է նոր փուլ: Այժմ եկել է տքնաջան ու հետեւողական աշխատանքի փուլը: Այժմ ժամանակն է խոսքից գործին անցնելու, խոսքերը գործերով ամրագրելու:

Ուրեմն՝ ի գործ: Կեցցե՛ք Հայաստանի Հանրապետությունը:

Փառք հայ ժողովրդին:

9 ԱՊՐԻԼԻ 2013Թ.

ԵՎՍ ՄԵՎ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «... Չեմ ճանաչում կեղծ իշխանություն- ներին»

ՀՀ նախագահի ընտրության պաշտոնական արդյունքները վիճարկող Րաֆֆի Յովհաննիսյանը 2013թ. ապրիլի 9-ին Ազատության հրապարակում կարդաց երդման տեքստ, որ կրկնում էին հավաքվածները:

«Ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիս, այսօր լուծարում եմ իմ կապերը ներկա անօրինական իշխանության հետ, հայտարարում եմ, որ չեմ ճանաչում կեղծ իշխանություններին, չեմ հնազանդվելու սուտ օրենքին, չեմ ենթարկվելու անիրավ հրամաններին:

Ես լիազորված եմ իրավունքով, պաշտպանված եմ Սահմանադրությամբ, ես չեմ վախենում, ես ես չեմ վաճառվում, ես ես չեմ նահանջում: Մենք՝ Հայաստանի 4-րդ Հանրապետության քաղաքացիներս, երդվում ենք մեր պապերի երազանքով, մեր երեխաների ապագայով, մեր պետության Սահմանադրությամբ, որ պայքարելու ենք, պայքարելու ենք ամե-

նուր, պայքարելու ենք սիրով, պայքարելու ենք հավատքով եւ չենք հոգնելու, չենք հիասթափվելու, հույս ենք տալու իրար, ուժ ենք տալու իրար, եւ մենք հաղթելու ենք:

Մենք՝ նոր Հայաստանի հպարտ քաղաքացիներս, սուրբ Արարտի շուքի ներքո կառուցելու ենք մեր իսկական հայրենիքը, որտեղից չեն փախչում մեր եղբայրներն ու քույրերը, այլ որտեղ վերադառնում են բոլոր հայերն ու բոլոր հայաստանցիները, որտեղ կա իրավունք, որտեղ կա աշխատանք, որտեղ կա ապագա, կա ընտրված նախագահ, արդար իշխանություն, երջանիկ ժողովուրդ: Այդ օրը հեռու չէ, այդ օրն այսօր է»:



9 ԱՊՐԻԼԻ 2013Թ., ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ



Էին նրանց տեղափոխում: Դիմակներով, մահակներով ու վահաններով զինված ոստիկաններին տեղափոխելու համար օգտագործվում էին նաև մայրաքաղաքի երթուղիներում սպասարկող տասնյակ ավտոբուսներ:

Արդեն երեկոյան, Ազատության հրապարակից մարդկային հոսքը տեղաշարժվեց դեպի Բաղրամյան պողոտա: Առաջին շարքում Բաֆֆի Հովհաննիսյանն էր՝ ընտանիքի եւ կուսակցական ընկերների հետ շրթա կազմած: Մի քանի հրնշտոց եղավ ոստիկանական զորքերի եւ միտինգավորների միջև: Մինչ այդ ոստիկանությունը զգուշացրել էր, որ երթն ապօրինի է, քաղաքացիները խախտում են հասարակական կարգը, ինչի համար կարող են պատժվել: Մարդկային ալիքը կանգնեցնել չհաջողվեց: Իսկական բախումը տեղի ունեցավ արդեն երթի վերջնակետում: Որքան էլ քաղաքացիները հորդորեցին ոստիկաններին՝ ձեռք չբարձրացնել քաղաքացիների վրա, ժողովրդին սկսեցին հրել: ...Ջարդը թափ առավ:

Իրավիճակը վերահսկելու համար պողոտա եկավ անձամբ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը: Նրա եւ Բաֆֆի Հովհաննիսյանի միջև երկար բանակցություն տեղի ունեցավ: Այդ ընթացքում ոստիկաններն անհարկի կերպով, գերազանցելով օրենքով իրենց տրված լիազորությունների սահմանը, արգելում էին լրագրողների տեղաշարժը: Մի քանի անգամ էլ հրեցին լրագրողներին: Ի դեպ, հրահրողների թվում նաև քաղաքացիական հագուստով ոստիկաններ էին: Մի քանի րոպե տեսած բանակցություններից հետո ոստիկաններից եւ քաղաքացիական անձանցից կազմված երթը՝ Բաֆֆի Հովհաննիսյանի եւ Վովա Գասպարյանի առաջնորդությամբ, շարժվեց դեպի Ծիծեռնակաբերդ՝ մոնավառության, այնտեղից էլ հետ՝ Բաղրամյան պողոտա:

Հավատանք, որ փոխենք

ԸՍՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԻ

Ապրիլի 9-ին նոր Հայաստանի երդմնակալության արարողությունից եւ երեկոյան հանրահավաքից հետո Բաֆֆի Հովհաննիսյանն առաջնորդեց ժողովրդին՝ մեկ դեպի Պոռչյան փողոցում գտնվող նախագահական ամառանոց, մեկ՝ դեպի

Բաղրամյան 26: Իսկ այդ ընթացքում Երեւանի փողոցներում ու բակերում բազմապատկվում էր ոստիկանների, մասնավորապես՝ հատուկջոկատայինների, ոստիկանության ներքին զորքերի ներկայացուցիչների թիվը: Տասնյակ ավտոբուսներով



ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Ուժը պետք է ծառայի օրենքին ու մարդուն

Սյունիքում նշվեց ոստիկանության մասնագիտական օրը

Սկզբը՝ էջ 1

Այսօր, 13 ապրիլին, ոստիկանության մասնագիտական օրը նշվեց Սյունիքում։ Օրը նշվեց Սյունիքի մարզային վարչության պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Վահագն Գևորգյանի հրամանով (ծառայողական պարտականությունները բարեխղճորեն եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու, օրինականության ամրապնդման, հասարակական կարգի ապահովման, հանցավորության դեմ պայքարի եւ մարտական պատրաստականության գործունե բարձր ցուցանիշներ ապահովելու համար) 33 ոստիկանության պատվոգրով պարգևատրվեց Վարդան Ծատրյանը (ոստիկանության փոխգնդապետ, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ)։ «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով պարգևատրվեցին Արտաշես Մարտիրոսյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի պետ), Անուշ Դազարյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության փորձաքննչական բաժանմունքի ավագ փորձագետ), Աշոտ Այվազյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի պետ)։



ՎԱԽԱՅԱՆԳ ԱՎԱԳՅԱՆ
Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ



13 ապրիլի 2013թ., Կապան

Մասնագիտական օրը նշվելու ճանապարհով։ Մեր մայրական է հասնել այն օրակներին, որ հասարակության մեջ ոստիկանը ընկալվի իբրև ընտանիքի անդամ, պաշտպան ու խորհրդատու։ Այդ առումով յուրաքանչյուր ոստիկան շատ անվերջնորդ ունի»։

Ելույթ ունեցավ նաև ոստիկանության Սյունիքի մարզային վարչության շտաբի պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ալիկ Դահրամյանը, ով մի ուշագրավ արժանագրում կատարեց. «Քարեփոխումներն արդեն սկսել ենք, եւ սկսել ենք մեզ միջոցառելու։ Սա խորհրդատու կատարված հանցագործությունների բացահայտումը, հանցագործությունները գրանցումից թաքցնելու արատավոր պրակտիկայի բացառումը, երիտասարդ կադրերի ներհուսքը, փորձառուների ակտիվությունը, վերաբերման վերադարձը շարք եւ ընդհանրապես համակարգում տիրող եռանդուն շարժը վկայում են, որ մեր ոստիկանական ընտանիքը համարժեք է արձագանքում վերափոխման հրամայականին։ Ցավովք, կան

արժանացան 33 ոստիկանապետի, 33 պաշտպանության նախարարի, ոստիկանության մարզային վարչության պետի գնահատանքին։ Մասնավորապես՝ 33 ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վահագն Գևորգյանի հրամանով (ծառայողական պարտականությունները բարեխղճորեն եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու, օրինականության ամրապնդման, հասարակական կարգի ապահովման, հանցավորության դեմ պայքարի եւ մարտական պատրաստականության գործունե բարձր ցուցանիշներ ապահովելու համար) 33 ոստիկանության պատվոգրով պարգևատրվեց Վարդան Ծատրյանը (ոստիկանության փոխգնդապետ, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ)։ «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով պարգևատրվեցին Արտաշես Մարտիրոսյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի պետ), Անուշ Դազարյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության փորձաքննչական բաժանմունքի ավագ փորձագետ), Աշոտ Այվազյանը (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի պետ)։

33 ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Վահագն Գևորգյանի հրամանով (ծառայողական պարտականությունները բարեխղճորեն եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու, օրինականության ամրապնդման եւ հասարակական կարգի ապահովման ու հանցավորության դեմ պայքարի գործունե ակտիվություն ցուցաբերելու համար) շնորհակալություն հայտնվեց Մուշեղ Գեորգյանին (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի պետ-ֆիլակտիկայի բաժանմունքի ավագ տեսուչ), Արմեն Պողոսյանին (ոստիկանության մայր, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրու բաժնի անչափահասների գործերով խմբի ավագ օպերլիազոր), Վարդան Մկրտչյանին (ոստիկանության ավագ լեյտենանտ, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի օպերլիազոր), Արա Աղաջանյանին (ոստիկանության լեյտենանտ, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի օպերլիազոր), Արա Աղաջանյանին (ոստիկանության լեյտենանտ, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի պետ-ֆիլակտիկայի բաժանմունքի տեղամասային տեսուչ), Վիլեն Գալստյանին (ոստիկանության ենթասպա, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ուղեկցող դասակի 2-րդ ջոկի ոստիկան)։

Բայց կարելի էր, ուշագրավը, ընթացիկ պահի խնդիրը Բաժնու ծախողումը չէ, հետընտրական շարժման ծախողումը չէ, ոչ իշխանական ուժերի տրոհված վիճակը չէ, ընտրական մոր համակարգի ստեղծման հրամայականը չէ... Ընթացիկ պահի գերխնդիրը գործող իշխանությանը փետրվարի 18-ին մերժած 600 հազար ընտրողի մտահոգություններին ու ձգտումներին ընդառաջ գնալն է, ինչը մտահոգության մատնվեց ընտրության հաջորդ օրը։ Իսկ այդ 600 հազարի մտահոգությունները պետք է հիշի, ի գիտություն եւ ի ղեկավարություն ընդունի նախեսառաջ գործող իշխանությունը։ Եվ համայնք առ համայնք գտնի պարզագույն հարցի պատասխանը (թե՛ն դա էլ անհայտ է)՝ ինչո՞ւ այդ մարդիկ դեմ թվարկեցին գործող նախագահին, ու դրանից բխող քայլեր ձեռնարկի։

Երկրում մոտ տասը տարի միա-հեծանորեն իշխող 334-ն դեռևս մեկ տարի առաջ՝ 2012թ. մայիսի 6-ի ընտրություններում, խոստացավ արձատրական փոփոխություններ ու որդեգրեց հայտնի կարգախոսը՝ «Հավատացե՛ք, որ փոխենք»։ Մեկ տարվա ընթացքում, սակայն, որեւէ եական քայլ չձեռնարկվեց խոստացած փոփոխությունը կյանքի կոչելու համար։ Բայց... 334-ն պարտավոր է հաշվի մատել հանրության այդ ոչ փոքր հատվածի մտահոգություններին հետ եւ սկսել խոստացած փոփոխությունները (բայց ոչ կոսմետիկ), եթե առաջնորդվում է երկրի ու պետության շահով։ Իսկ փոփոխությունները պետք է սկսել հայտնի ավգյան ախտները մաքրելուց։ Այո, ժամանակն է, որ Մերժ Մարզայանը վերցնի ցախավելն ու պետական, իշխանական ախտները մաքրի աղբից (մասնավորապես որ ինքն առայժմ այդպիսի հնարավորություն ունի)։ Այլապես 600 հազարը կբազմապատկվի ու ավելի հեղափոխական կդառնա եւ չափավորական Բաժնի 3-րդ փուլանցի-սյանի փոխարեն առաջնորդ կկարգվի (մույն այդ բյուրավորների կողմից) արձատրական որեւէ մեկը, ով երբեք եւ ոչ մի պարագայում Բաղրայանյանից ժիծե՞նականաբար չի գնա...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՆՈՒՐԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ-99



Համո Սահյանի քույրը՝ Հասմիկ Գրիգորյանը Էլույթի ժամանակ

Հայ բանաստեղծի օրհներգ տեսակը

Հայ նշանավոր քնարերգու Համո Սահյանն ապրիլի 14-ին դարձավ 99 տարեկան

Նախքան մեծարևմտի խոսք ասելու եւ նրա հայրենի քաղաքի հրապարակում ժայռեղեն վեր խոյացող հուշարձան-սրբատեղիի մոտ պահ առ պահ ստվարացող ուխտավորների խնկարկում-արարողությանն անդրադարձաւ, դառնաճիւղ ու փառաբանեց Համո Ոսկեբերան Սահյանի ծնունդը, որը, ըստ էության, կանխորոշված էր գեղեցիկ եւ վայելուչ աստվածային երթով, ով մեզ պէս «հողեղեն, հողոտ, հողածին», կրակների վրայով ծախրած, հանդուրժումի եւ հաշտվածության վերին բարոյականությունը ճաշակած, բնությունից՝ մարդ, մարդուց՝ բնություն երթուղարձն ապահոված, իր ներկան հավերժորեն ժողովրդի ու հայրենի եզերքում ծոցվորած հայ մարդու օրհներգ, հացընկեր, գրուցակից եւ ունկնդիր տեսակն էր:

Նրա ծննդյան հերթական տարեդարձը մեծ շուքով նշվեց բանաստեղծի հայրենի Սիսիան քաղաքում: Արարողությանը մասնակցում էին բանաստեղծի հայրենակիցները, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, բանաստեղծի մտերիմ ընկեր Վլադիմիր Մովսիսյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Կիմ Աղաբեկյանը, Դավիթ Գասպարյանը, Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, բազմաթիվ հյուրեր, մտավորականներ:

Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը բացելով արարողությունը՝ շնորհավորեց ներկայից, ողջ հայ ժողովրդին իրենց տաղանդավոր գավակի ծննդյան տարեդարձի կապակցությամբ, շնորհակալություն հայտնելով Սիսիանի աշխարհին, նրա ժողովրդին՝ Համո Սահյանի ծնելու համար:

Համո Սահյանին մեծարման եւ երախտիքի խոսք ասաց բանաստեղծի ընկեր Վլադիմիր Մովսիսյանը: Նա բանաստեղծին համարեց հայ գրականության ամենամեծ համաստեղության երախտավորներից՝ նրան դասելով Հովհաննես Թումանյանի,

Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի եւ մյուս գագաթների շարքը: Այնուհետեւ ասաց. «Սյունիքը տվել է շատ հանճարներ՝ գրականության, երաժշտության եւ այլ ասպարեզներում. Ակսել Բակունց, Սերո Խանգուզյան, Սուրեն Այվազյան, Գուսան Աշոտ, Սաթյաններ, Տաթևիկ Սազանդարյան եւ այլն: Ես մշտապես ինձ հարց եմ տվել՝ ինչո՞ւն է Համո Սահյան մեծ բանաստեղծի տաղանդի ուժը, նրա ստեղծագործությունների հմայքն ու գորությունը, որոնք եւ բնատուր են, միաժամանակ, եւ աստվածային-տիեզերական: Սով-

որական մահկանացուն երբեք չէր կարող այդպես զգալ բնությունը, նրա հետ մարդու հավերժական գրույցը, նրա ողջ խոհափիլիսոփայությունը: Այդ պոետական զգացողությունը կարող էր սնվել միայն տիեզերական արարչագործությունից, եւ դրա վկայությունն են Սահյանի երկնած հանճարեղ գործերը: Նրա ողջ պոեզիան բազմախորհուրդ է, միաժամանակ, առեղծվածային եւ պարզ, անասիման պատկերավոր, այնպես որ բնությունն ինքն այրեցան... ընկալելի եւ խորհրդավոր չէ: Եթե հասարակ մասերին լեզու ունենար, հավանաբար

ինքն էլ կզմայլվեր Սահյանի պատկերած՝ իր գեղեցկությամբ, շուքով եւ ողջ փիլիսոփայությամբ: Հիրավի, ինչպե՞ս չհիանալ այս տողերով.

*Ժայռից մատուր է կայծում,
Կարմիր սարսուռ է կայծում.
Չորում մշուշ է:
Առուն մատուր է փանում,
Կարմիր սարսուռ է փանում.
Աշուն է, ուշ է:
Սահյանն ունի բնաշխարհի յուրահատուկ պաշտամունք: Նա բնապաշտ է, հողապաշտ ու հայրենապաշտ, նա իր էությանը հացապաշտ է: Աշխարհը մահից հեռու պահող ցորենին նա այսպես է դիմում.*

*Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Մայրը հողն է սուրբ, հայրը՝ երկինքը,
Հող դարձնենք քարը եւ ցորեն ցանենք,
Փայտ փայտ ցորենին եւ օրհնաբանենք:*

Սահյան բանաստեղծի համար հայրենիքը ոչ քարտեզ է եւ ոչ էլ՝ ուռճացված գլոբուս, հողը եւ հայրենիքը նրա համար համատեղված երջանկություն են, ապրելու եւ արարելու հիմք, առանց որի մարդը ոչինչ է: Պատահական չեն այս տողերը.

*Այր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Այր ես ինչպե՞ս ուրիշ փող մնամ:*

Սահյան բանաստեղծն այնքան բնապաշտ, ծառապաշտ, ծաղկապաշտ եւ անտառապաշտ է, որ անգամ իր մտերիմներին խնդրում է մահից հետո իրեն մի հին կոճղում դնել եւ իր դագաղի համար ծառ չկտրել...

Գերաստանապաշտ է Սահյանը, տոհմիկ-ավանդական ընտանիքի խորհրդապաշտ, որն այնպես պատկերավոր երեսուն է նրա բազմաթիվ ստեղծագործություններում: Ահավասիկ.

*Օրը մթնեց, ժամն է արդեն
Երկինահացի,
Տիրությունս կամեց-կամաց
Փոխվում է լացի:
Համո Սահյանը խղճի բանաստեղծ է:
Նա ասում է.
Խղճից հեղ գրույց արա
Անեն օր քնելուց առաջ...*

Մեր ավանդույթներին, մեր պատմությանը, մեր հոգսերին եւ ուրախություններին, մեր հիշատակներին ու հուշերին, մեր բոլոր զգացմունքներին այնքան հաղորդակից ու մերձ է բանաստեղծը, որ, թվում է, շոշափում ենք նրա տողերը եւ թաթխվում նրանց գեղեցկությամբ ու տողատակերի փիլիսոփայությամբ:

Ահավասիկ, մի փոքրիկ հուշ պատմեն: Սահյանը կարողում է իր նոր գրած բանաստեղծությունը. «Լռած գանգ է կյանքս, ես ավերակ վանքս, էլ արդող չունեն...»: Ես հակադարձում եմ վարպետին. «Ինչո՞ւ ես այդպիսի տողեր գրել, վարպետ, դու շատ-շատ արդողներ ունես, եւ դեռ շատանալու է նրանց թիվը...»: Եվ իրոք, ես չէի սխալվել. Համո Սահյան բանաստեղծն այսօր միլիոնավոր արդողներ ունի, իր պոեզիան սիրողների ստվարացող բանակ: Այսօր մեծ բանաստեղծը դարձել է ողջ հայ ժողովրդի կուռքը, եւ ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը Սահյանի պոեզիայի նկատմամբ: Մեկ այլ բանաստեղծության մեջ ասում է.

*Պես մոր ծիծը բերանում-
Իմաստուն է երեխան...
Էլ ո՞վ կա որ խրաբոս,
Ինձ բաց թողեք, ես գնամ:*

Ուզում եմ ասել՝ սիրելի բանաստեղծ, դու դեռ շատ-շատ տալիք ունես քո ժողովրդին, եւ քո ժողովուրդն էլ երբեք բաց չի թողնելու քեզ: Քո հայրական խրատների ու խորհուրդների կարիքը մեր ժողովուրդը միշտ է ունենալու:

Համո Սահյան բանաստեղծը եւ մեծ քնարերգու կյանքի վերջին տարիներին դիմելով հայրենի եզերքի քար ու քարափնդին, մտահոգ եւ սիրասուն խնդրանքով ասում է.

*Ո՛ր խոսքումներ, ո՞չ երգում
Չսպասեք ու քնենք,
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա ջրենք...*

Համո Սահյանն ինքը լինելով մեր երթի, մեր բնաշխարհի ու հոգու մեծ տաղերգու, միաժամանակ աստվածեղեն եւ աստվածատուր, ծուլված բնությանը եւ իր սիրելի քարափնդին, ինչպե՞ս կարող էր գեթ մի պահ մտածել՝ իրեն բացակա դնելու մասին: Հայրենի եզերքն ու նրա մարդիկ մենք, գալիք սերունդները, հավերժորեն ներկա ենք համարելու մեծ բանաստեղծին մեր դժվար երթում, մեր բոլոր ուրախ եւ տխուր պահերի մեջ...»:

Համո Սահյանի ծննդյան տարեդարձի առթիվ շնորհավորանքի խոսք ասաց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ բարձր գնահատելով բանաստեղծի անցած ուղին, գրական վաստակը, նրա քնարական պոեզիայի անձեռակերտ գեղեցկությունը, խորհրդապաշտությունը եւ խոհափիլիսոփայական ընդհանրացումները:

- Համո Սահյան բանաստեղծի ստեղծագործություններն ամբողջությամբ բխելով մարդու եւ բնության հավերժական դաշինքից, միաժամանակ, բացառիկ է դրանցում առկա պետական մտածելակերպը, անճուգական Հայաստան աշխարհին նվիրված նրա բանաստեղծական շարքը: Ահա նրա հանճարը եւ պետություն պահող հայրենասիրությունը վկայող մի բարձրարժեք գործ, որում ասում է.

*Հայաստան ասելիս աշխարհը իմ փունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ չունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:*

Մեծ բանաստեղծի ծննդյան օրը եկել ենք երիցս հաղորդվելու նրա գրականությանը, մարդկային ու քաղաքացիական կերպարին, փառաբանելու Սյունյաց աշխարհը, որ հայ ժողովրդին պարզեցել է Սահյանի պես մեծ բանաստեղծ-քնարերգու, - ասաց Սյունիքի մարզպետը:

Հուզիչ ելույթ ունեցավ մեծ բանաստեղծի քույրը՝ Հասմիկ Գրիգորյանը: Նա շնորհակալություն հայտնեց մարզային եւ տեղական իշխանություններին, ներկա հասարակությանը՝ իր սիրելի եղբոր՝ Համո Սահյանի հիշատակը վառ պահելու, մեծարելու եւ



14 ԱՊՐԻԼԻ 2013Թ., Սիսիան, մարզի ու համայնքի ղեկավարները, հյուրերը ծաղկեպսակներ ու ծաղիկներ են դնում Համո Սահյանի հուշարձանի պարվանդանին



